

Սիրելի՛ վայոցձորցիներ,

Շնորհավորում եմ ձեզ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության օրվա կապակցությամբ:

Մեր երկրի հիմանական օրենքը մեր անկախ պետականության ստեղծման և կառուցման կարևորագույն երաշխիքներից մեկն է: 20 տարի առաջ հայ ժողովուրդն ընտրեց իր երկրի կայացման գլխավոր փաստաթուղթը, որով ամրագրվեց Հայաստանի Հանրապետության ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետություն լինելու փաստը: Վստահ եմ, որ միասնական ուժերով մենք շարունակելու ենք մեր երկրի կայացման պատասխանատու և դժվարին գործը, որի համար մեր իշխանությունների կողմից իրականացվող հետևողական աշխատանքը և ձեռնարկած քայլերը կնպաստեն մեր ժողովրդի շահերի և ազատությունների ամրապնդմանը:

Սիրելի՛ հայրենակիցներ,

Եվս մեկ անգամ շնորհավորելով Հայաստանի Հանրապետության կարևորագույն տոներից մեկի առթիվ՝ մաղթում եմ խաղաղություն, բարեկեցություն և համերաշխություն:

**Մեկնարկել է Ստեփան Ավագյանի իշատակին և վերականգնվող էներգիայի զարգացման ծրագրի շարունակումը**

Հունիսի 26-

ինՎայոցձորի մարզի Ջերմուկ քաղաքի «Ջերմուկ աշխարհ» առողջարանում տեղի ունեցավ շախմատի Վայոցձորի մարզային ֆեդերացիայի երջանկահիշատակ նախագահ Ստեփան Ավագյանին նվիրված "Ջերմուկ 2015" պատանեկան 10-

րդմիջազգային բացմրցաշարի բացման հանդիսավոր արարողությունը:

Հուշամրցաշարի բացման արարողության ընդունելի խոսքով հանդես եկան ՀՀ Վայոցձորի մարզպետ,

շախմատի Վայոցձորի մարզային ֆեդերացիայի նախագահ Հարություն Սարգսյանը և Ջերմուկի քաղաքապետ Վարդան Հովհաննիսյանը:

Տեղեկացնենք, որ ավանդական դարձած հուշամրցաշարն անցկացվելու է հունիսի 26-ից հուլիսի 6-ը, որին մասնակցում են մինչև 18

տարեկան պատանիներ և ջիկներ Հայաստանից, Ռուսաստանից, Ղազախստանից, Շվեդիայից, Գերմանիայից և Թուրքմենստանից: